Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության

քննչական ծառայության 4-րդ կայազորային քննչական բաժնին

Թիվ 90250112 քրեական գործով տուժողի իրավահաջորդ

Մովսես Խաչատրյանի ներկայացուցիչ՝

փաստաբան Մուշեղ Շուշանյանից.

հասցե՝ ք. Երևան, Մառի փողոց 5 շենք, բն. 44,

հեռախոս՝ 091-41-22-20

ՄԻՋՆՈՐԴՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ՊՆ քննչական ծառայության 4-րդ կայազորային քննչական բաժնի վարությունում Հայկ Մովսեսի Խաչատրյանի մահվան փաստով քննվող թիվ 90250112 քրեական գործով 19.07.2012թ.-ին ինձ հայտարարվեց նախաքննության ավարտի մասին, նույն օրն ինձ տրամադրվեցին քրեական գործի նյութերի լուսապատճենները՝ դրանց երեք աշխատանքային օրվա ընթացքում ծանոթանալու և օրենքով սահմանված ժամկետում հնարավոր միջնորդությունները ներկայացնելու համար:

Ծանոթանալով քրեական գործի նյութերին՝ գտնում եմ, որ մեղադրյալներին առաջադրված մեղադրանքները չեն բխում գործով ձեռք բերված ապացույցներից, գործով որպես մեղադրյալ չեն ներգրավվել անձինք, որոնց մեղադրանք առաջադրելու համար առկա են բավարար ապացույցներ:

2011թ. դեկտեմբերի 30-ին, ժամը 22.30-ին <<Նորք>> ինֆեկցիոն կլինիկական հիվանդանոցում գրանցվել է Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության 68617 զորամասի ժամկետային զինծառայող, շարքային Հայկ Մովսեսի Խաչատրյանի մահը:

Պետությունն, ի դեմս իր իրավասու մարմինների, երբ տեղի է ունենում կյանքի իրավունքի խախտում, կրում է արդյունավետ քննություն կատարելու պոզիտիվ պարտավորություն, ինչը ենթադրում է, որ ոչ միայն պետք է պարզվեն անձի մահվանը հանգեցրած փաստերը և բացահայտվեն մահվան պատճառները, այլև

պետք է բացահայտվեն և պատասխանատվության ենթարկվեն անձի մահվան համար մեղավոր (պատասխանատու) անձինք:

1. Սույն գործով որպես մեղադրյալ ներգրավվել է ՀՀ ՊՆ 14203 զորամասի (Կենտրոնական կլինիկական զինվորական հոսպիտալ) նյարդաբանական բաժանմունքի պետ, փոխգնդապետ Մինաս Սերգեյի Մկրտչյանը: 21.01.2012թ.-ի որոշմամբ[1] նրան մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 376 հոդվածի 1-ին մասով այն բանի համար, որ *<<… հանդիսանալով պաշտոնատար անձ՝ ՀՀ ՊՆ 14203 զորամասի նյարդաբանական բաժանմունքի պետ, կոչումով փոխգնդապետ, հիշյալ բաժանմունքում բուժվող ժամկետային զինծառայող Յուրա Բաղալյանի մոտ 11.12.2011թ. <<ջրծաղիկ>> վարակիչ հիվանդություն հայտնաբերելուց հետո, անփույթ վերաբերմունք դրսևորելով ծառայության նկատմամբ և խախտելով ՀՀ ԶՈՒ ներքին ծառայության կանոնագրքի 341 հոդվածի պահանջները, նաև անտեսելով … կանխարգելիչ միջոցառումների անցկացման վերաբերյալ մեթոդական նամակի պահանջները, վարակի հետագա տարածումը կանխարգելելու ուղղությամբ համապատասխան միջոցառումներ չի կատարել, մասնավորապես համաճարակաբանի և վարակաբանի ցուցումներով վարակի դեմ պայքարի ուղղությամբ արդյունավետ գործողություններ կատարելու համար միջոցներ չի ձեռնարկել իր ղեկավարած բաժանմունքում նշված նեղ մասնագիտական գիտելիքներ ունեցող անձանց մասնակցությունն ապահովելու համար, ինչպես նաև չի արգելել քաղաքացիների ելումուտը նշված բաժանմունք: Արդյունքում, Մ. Մկրտչյանի կողմից ժամանակին և լիարժեք միջոցառումներ չկազմակերպելու հետևանքով, հիշյալ բաժանմունքում վարակի դեմ պայքարը լիարժեք չի կատարվել, վարակի հետագա կանխումը լիարժեք չի կանխվել, սուր շնչառական դեպքերը կրկնվել են, ինչն էլ էական վնաս է պատճառել զինծառայողների առողջությանը և զինվորական ծառայության կարգին: Բացի այդ, նա հանդիսանալով հիշյալ բաժանմունքում <<դիմային ներվի բորբոքում մոնոնեյրոպատիա>> ախտորոշմամբ ստացիոնար բուժման մեջ գտնվող ժամկետային զինծառայող Հայկ Մովսեսի Խաչատրյանի բուժող բժիշկը, 28.12.2011թ. վերջինիս մոտ ջրծաղիկ վարակը հայտնաբերելուց հետո, վիրաբույժի կողմից անցկացվող հետազոտությունների ընթացքում … վարակաբանի մասնակցություն չի ապահովել, այդ ուղղությամբ հիվանդը լիարժեք բուժօգնություն չի ստացել և նույնիսկ վիրաբուժական սուր պաթոլոգիա չհայտնաբերելուց հետո վերջինիս ինֆեկցիոն հիվանդանոց չի տեղափոխել, այլ <<ջրծաղիկի>> հայտնաբերելուց հետո 23 ժամ հիվանդը մնացել է վարակաբանության*

[1] Տես հատոր 2, գ.թ. 44-45

միջոցառումների տեսանկյունից անօգնական վիճակում, նրա մոտ արագ կերպով զարգացել են ջրծաղիկի ծանր հետևանքները, առաջացել գլխուղեղի ախտահարման երևույթներ, ցնցումներ, լյարդի ծանր ախտահարում, հեմոռագիկ սինդրոմ և ներքին արյունահոսություն, որի հետևանքով հիվանդը հետագայում ծայրահեղ ծանր վիճակում տեղափոխվել է Նորք ինֆեկցիոն հիվանդանոց և մահացել>>:

22.01.2011թ.-ին կայացրած որոշումներով[2] Մինաս Մկրտչյանին առաջադրված մեղադրանքը լրացվել է ՀՀ քրեական օրենսգրքի 130 հոդվածի 2-րդ մասով, նկատի ունենալով, որ *<<Մինաս Մկրտչյանի կողմից որպես բուժող բժիշկ Հայկ Մովսեսի Խաչատրյանի նկատմամբ իր մասնագիտական պարտականությունները ոչ պատշաճ կատարելու հանգամանքը, որի հետևանքով Հայկ Խաչատրյանի մոտ արագ կերպով զարգացել են ջրծաղիկի ծանր հետևանքներ և վերջինս դրա արդյունքում մահացել է համապատասխանում է ՀՀ քր. օր-ի 130 հոդվածի 2-րդ մասով նախատեսված հանցագործության հատկանիշներին>>:*

12.07.2012թ.-ին քննիչի կողմից որոշում է[3] կայացվել Մինաս Մկրտչյանին ՀՀ քրեական օրենսգրքի 130 հոդվածի 2-րդ մասով առաջադրված մեղադրանքը վերացնելու մասին: Այս որոշումը պատճառաբանված է հետևյալ կերպ. *<<... Համաձայն հանձնաժողովային դատաբժշկական փորձաքննության 08.05.2012թ. եզրակացության, … ջրծաղիկ հիվանդության <<վիսցերալ>> ձևը հանդիսանում է որպես տվյալ հիվանդության գեներալիզացված ձև, որի ժամանակ ախտահարվում են բոլոր օրգան համակարգերը և նման դեպքում հիվանդությունն ունի մահացության բարձր տոկոս: Հ. Խաչատրյանի մոտ առկա <<ջրծաղիկ>> հիվանդությունը հայտնաբերելուց հետո <<Նորք>> ինֆեկցիոն հիվանդանոց տեղափոխելու և համապատասխան լրիվ ծավալով բուժում կատարելու պարագայում, կանխատեսել հիվանդության ելքը հնարավոր չէ:* [փորձաքննության եզրակացությունից մեջբերման ավարտ]: *Հաշվի առնելով, որ հօգուտ մեղադրյալի մեկնաբանվում են ոչ միայն անձի ընդհանուր մեղավորության մասին չփարատված կասկածները, այլ նաև առաջադրված մեղադրանքի առանձին դրվագներին, մեղքի ձևին, հանցանքի կատարմանն անձի մասնակցության աստիճանին և բնույթին, պատասխանատվությունը մեղմացնող ու ծանրացնող հանգամանքներին առնչվող չփարատված կասկածները, և ի նկատի ունենալով, որ փորձագետների կողմից հնարավոր չի եղել պատասխանել այն հարցին, թե լրիվ ծավալով բուժում կատարելու պարագայում, ինչպիսին կլիներ հիվանդության ելքը, ուստի Մինաս Սերգեյի*

[2] Տես հատոր 2, գ.թ. 82-85
[3] Տես հատոր 4 (գործ-թերթը նշված չէ)

Մկրտչյանին ՀՀ քր. օր-ի 130 հոդվածի 2-րդ մասով առաջադրված մեղադրանքը չի հաստատվում>>:

Քննիչի այս հետևությունը առնվազն տարակուսանք է հարուցում, քանի որ այն չի բխում հանձնաժողովային դատաբժշկական փորձաքննության եզրակացությունից և ՀՀ քրեական օրենսգրքի 130 հոդվածի 2-րդ մասի բովանդակությունից, և առհասարակ չի համապատասխանում ձևական տրամաբանության պահանջներին՝ հետևյալ հիմնավորմամբ:

Հանձնաժողովային դատաբժշկական փորձաքննության եզրակացության համաձայն՝ *<<38-39. … Քանի որ բուժման ընթացքում եղել են բացթողումներ և հիվանդության ելքը եղել է ոչ բարենպաստ, ապա ներկայումս պարզել թե բժշկական բնույթի բոլոր միջոցառումները ամբողջությամբ և լրիվ ծավալով կատարելու հետևանքով ինչպես կլիներ հիվանդության ելքը հնարավոր չէ>>:*

Եթե փորձենք էլ ավելի պարզորոշ ներկայացնել եզրակացության մեջբերված հատվածում արտահայտած առանց այն էլ պարզ միտքը, ապա՝ Հայկ Խաչատրյանի բուժման ընթացքում եղել են բացթողումներ, ինչի հետևանքով պարզ չէ, որ եթե նրա նկատմամբ բժշկական բնույթի բոլոր անհրաժեշտ միջոցառումները իրականացվեին ամբողությամբ և լրիվ ծավալով, հնարավոր կլիներ խուսափել մահացու ելքից, թե ոչ: Այլ կերպ ասած, մահացու ելքից խուսափելու հավանականությունը չի հերքվում և չէր էլ կարող հերքվել:

ՀՀ քրեական օրենսգրքի 130 հոդվածի 2-րդ մասը նախատեսում է. *բժշկական օգնություն և սպասարկում իրականացնողների կողմից մասնագիտական պարտականությունները չկատարելը կամ ոչ պատշաճ կատարելը՝ դրանց նկատմամբ անփույթ կամ անբարեխիղճ վերաբերմունքի հետևանքով, որն անզգուշությամբ առաջացրել է բուժվող հիվանդի մահ կամ մարդու իմունային անբավարարության վարակի հարուցիչով վարակում, պատժվում է ազատազրկմամբ՝ երկուսից վեց տարի ժամկետով՝ որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելով՝ առավելագույնը երեք տարի ժամկետով կամ առանց դրա:*

Նշվածից հետևում է, որ մեղադրյալ Մինաս Մկրտչյանի գործողություններում (անգործության) մեջ ՀՀ քրեական օրենսգրքի 130 հոդվածի 2-րդ մասով նախատեսված հանցակազմի առկայությունը հաստատելու կամ հերքելու համար անհրաժեշտ է ընդամենը հաստատել հետևյալ փաստերի առկայությունը կամ բացակայությունը. (1) Մինաս Մկրտչյանը հանդիսացել է բժշկական օգնություն և

սպասարկում իրականացնող անձ Հայկ Խաչատրյանի նկատմամբ, (2) իր մասնագիտական պարտականությունները Հայկ Խաչատրյանի նկատմամբ Մինաս Մկրտչյանը կատարել է ոչ պատշաճ, (3) Հայկ Խաչատրյանը մահացել է:

Նշված բոլոր փաստերը նախաքննության մարմնի կողմից ընդունվում են որպես քրեական գործի նախաքննության ընթացքում ձեռք բերված ապացույցներով հաստատված փաստեր: Հետևաբար, Մինաս Մկրտչյանին ՀՀ քրեական օրենսգրքի 130 հոդվածի 2-րդ մասով առաջադրված մեղադրանքը չհաստատվելու և այն վերացնելու անհրաժեշտության վերաբերյալ հետևությունը ակնհայտ անհիմն է և Մինաս Մկրտչյանին այդ հոդվածով քրեական պատասխանատվությունից ազատելու նպատակ է հետապնդում:

Ինչ վերաբերում է Մինաս Մկրտչյանին ՀՀ քրեական օրենսգրքի 376 հոդվածի 1-ին մասով առաջադրված մեղադրանքին, ապա պնդում եմ, որ Մ. Մկրտչյանին մեղսագրվող արարքները պետք է որակվեն ոչ միայն ՀՀ քրեական օրենսգրքի 376 հոդվածի 1-ին մասով, այլ նաև նույն հոդվածի 2-րդ մասով:

Նախ, հարկ է նշել, որ անհասկանալի է, թե ինչ չափանիշներով առաջնորդվելով է նախաքննության մարմինը որոշել, որ ծառայության նկատմամբ Մինաս Մկրտչյանի անփույթ վերաբերմունքը պատճառել է էական վնաս (ՀՀ քրեական օրենսգրքի 376 հոդվածի 1-ին մաս), սակայն չի առաջացրել ծանր հետևանքներ (ՀՀ քրեական օրենսգրքի 376 հոդվածի 2-րդ մաս)[4]: Եթե անձի մահը չի դիտվում ծանր հետևանք, ապա ինչ պետք է տեղի ունենա, որպեսզի համարվի, որ առաջացել է ծանր հետևանք: Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ մարդը, նրա արժանապատվությունը, հիմնական իրավունքները և ազատությունները հռչակված են բարձրագույն արժեքներ: Հետևաբար՝ մարդու կյանքը բարձրագույն արժեք է, և մարդու առողջության նկատմամբ անփույթ վերաբերմունքը, որն անզգուշությամբ հանգեցրել է մարդու մահվան, առաջացրել է ծանր հետևանք (մարդու մահվանը հանգեցրած հետևանքից ավելի ծանր հետևանք ուղղակիորեն չկա):

ՀՀ քրեական օրենսգրքի 376 հոդվածի 1-ին մասով Մինաս Մկրտչյանը պետք է մեղադրվի, մասնավորապես, այն բանի համար, որ դեռևս 11.12.2011թ.-ին իր

[4] Մինաս Մկրտչյանին մեղադրանք է առաջադրվել մեղմ պատիժ նախատեսող իրավական նորմով. ՀՀ քրեական օրենսգրքի 376 հոդվածի 1-ին մասը, որով մեղադրվում է Մինաս Մկրտչյանը, պատժվում է կարգապահական գումարտակում պահելով՝ առավելագույնը 2 տարի ժամկետով, կամ ազատազրկմամբ՝ առավելագույն 3 տարի ժամկետով, մինչդեռ նույն հոդվածի 2-րդ մասը որպես պատիժ նախատեսում է ազատազրկումը 3-6 տարի ժամկետով:

ղեկավարած նյարդաբանական բաժանմունքում ջրծաղիկով վարակված հիվանդ հայտնաբերելուց հետո համապատասխան միջոցներ չի ձեռնարկել կանխարգելիչ միջոցառումներ իրականացնելու ուղղությամբ, ինչի պարագայում հնարավոր է, որ կանխվեին բաժանմունքում ջրծաղիկով վարակվելու հետագա դեպքերը: Նրա կողմից նաև պատշաճ հսկողություն չի իրականացվել իր բաժանմունքի բժիշկների, մասնավորապես, Արմինե Սերոբյանի կողմից իր մասնագիտական պարտականությունները պատշաճ կատարելու առումով, վերջինիս չեն արվել դիտողություններ թերացումները վերացնելու և մասնագիտական պարտականությունները պատշաճ կատարելու վերաբերյալ:

Վերոգրյալների հիման վրա **միջնորդում եմ որոշում կայացնել Մինաս Սերգեյի Մկրտչյանին ՀՀ քրեական օրենսգրքի 130 հոդվածի 2-րդ մասով, 376 հոդվածի 2-րդ մասով, 376 հոդվածի 1-ին մասով որպես մեղադրյալ ներգրավելու մասին:**

2. Սույն գործով որպես մեղադրյալ ներգրավվել է նաև ՀՀ ԶՈՒ գլխավոր վիրաբույժ Միքայել Ժորայի Միքայելյանը: 12.07.2012թ.-ին կայացված որոշմամբ նրան մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 376 հոդվածի 1-ին մասով այն բանի համար, որ *<<հանդիսանալով պաշտոնատար անձ՝ ՀՀ ՊՆ 14203 զորամասի հրամանատար՝ կենտրոնական կլինիկական զինվորական հոսպիտալի պետ, կոչումով գնդապետ, 11.12.2011թ. նյարդաբանական բաժանմունքում բուժվող ժամկետային զինծառայող Յուրա Բադալյանի մոտ ջրծաղիկ հիվանդություն հայտնաբերելուց հետո, անփույթ վերաբերմունք դրսևորելով ծառայության նկատմամբ և խախտելով ՀՀ ԶՈՒ ներքին ծառայության կանոնագրքի 341 հոդվածի պահանջները, նաև անտեսելով … կանխարգելիչ միջոցառումների անցկացման վերաբերյալ մեթոդական նամակի պահանջները, հիշյալ դեպքի մասին ՀՀ ԶՈՒ հիգիենիկ հակահամաճարակային անվտանգության ծառայությանը չի հայտնել և բաժանմունքում օբսերվացիոն ռեժիմ չի հայտարարել: Բացի այդ, Միքայել Միքայելյանը վարակի հետագա տարածումը կանխարգելելու ուղղությամբ համապատասխան միջոցառումներ չի կազմակերպել, մասնավորապես այդ գործընթացը ղեկավարելու համար համաճարակաբանի և վարակաբանի մասնակցություն չի ապահովել և նշված բաժանմունք քաղաքացիների մուտքը չի արգելել: Միքայել Միքայելյանի կողմից ժամանակին և լիարժեք միջոցառումներ չկազմակերպելու հետևանքով, հիշյալ բաժանմունքում վարակի դեմ պայքարը լիարժեք չի կատարվել, վարակի հետագա տարածումը լիարժեք չի կանխվել, <<ջրծաղիկ>> հիվանդության դեպքերը կրկնվել են, ինչով էական վնաս է պատճառել զինծառայողների առողջությանը և զինծառայության կրման սահմանված կարգին>>:*

Ընդունելով մեջբերված հատվածում Մ. Միքայելյանին մեղսագրվող արարքի նկարագրությունը և դրան տրված իրավաբանական որակումը, պետք է փաստեմ, որ նախաքննության մարմնի ուշադրությունից <<վրիպել>> է այն էական հանգամանքը, որ Մ. Միքայելյանի անգործության հետևանքով ոչ միայն էական վնաս է պատճառվել զինծառայողների առողջությանը և զինծառայության կրման սահմանված կարգին, այլև անդառնալի, անվերականգնելի, անհատուցելի վնաս է պատճառվել՝ նրա ղեկավարած հոսպիտալում բուժում ստացող Հայկ Խաչատրյանը վարակվել է ջրծաղիկ հիվանդությամբ և մահացել է: Սույն միջնորդության 1-ին կետում նշված հիմնավորումներով Մ. Միքայելյանի արարքները նույնպես անզգուշությամբ առաջացրել են ծանր հետևանք, այսինքն նրա արարքներում նույնպես առկա է ՀՀ քրեական օրենսգրքի 376 հոդվածի 2-րդ մասով նախատեսված հանցակազմը:

Վերոգրյալի հիման վրա **միջնորդում եմ որոշում կայացնել Միքայել Ժորայի Միքայելյանին ՀՀ քրեական օրենսգրքի 376 հոդվածի 2-րդ մասով, 376 հոդվածի 1-ին մասով որպես մեղադրյալ ներգրավելու մասին:**

3. Քրեական գործի նախաքննության ընթացքում այդպես էլ մեղադրանք չի առաջադրվել ՀՀ ՊՆ 14203 զորամասի (Կենտրոնական կլինիկական զինվորական հոսպիտալ) նյարդաբանական բաժանմունքի բժիշկ Արմինե Վազգենի Սերոբյանին, մինչդեռ քրեական գործով ձեռք բերված ապացույցները նրան մեղադրանք առաջադրելու առավել քան բավարար հիմքեր են տալիս:

Այսպես, քրեական գործի տվյալներով հիմնավորված է, որ Հայկ Խաչատրյանին ՀՀ ՊՆ 14203 զորամասում ընդունելու օրվանից՝ 2011թ. դեկտեմբերի 9-ից նրա բուժող բժիշկը եղել է նյարդաբանական բաժանմունքի բժիշկ-օրդինատոր Արմինե Սերոբյանը, ով 2011թ. դեկտեմբերի 20-ից գտնվել է արձակուրդի մեջ, սակայն իր ցուցմունքների համաձայն՝ մինչև 2011թ. դեկտեմբերի 26-ը՝ դեկտեմբերի 21-ին, 23-ին և 26-ին իբր մի քանի անգամ այցելել և զննել է բաժանմունքի բոլոր հիվանդներին, այդ թվում Հայկ Խաչատրյանին:

Արմինե Սերոբյանը, 2011թ. դեկտեմբերի 9-ից մինչև դեկտեմբերի 20-ը հանդիսանալով Հայկ Խաչատրյանի առողջության համար պատասխանատու բուժող բժիշկ 2011թ. դեկտեմբերի 11-ին, 18-ին, 20-ին չի կատարել Հայկ Խաչատրյանի առողջական վիճակի զննում, ինչը պարտավոր էր անել: Բացի այդ, ըստ հիվանդության մեջ առկա Հայկ Խաչատրյանի արյան ընդհանուր անալիզի

տվյալների[5]՝ 10.12.2011թ.-ին կատարված անալիզի արդյունքների՝ 5 պարամետրերի մասով նորմայից նշանակալի շեղումներ են արձանագրվել[6], ինչը պետք է հատուկ ուշադրության արժանանար, սակայն այդպես էլ չի արժանացել բժիշկ Արմինե Սերոբյանի կողմից: Ակնհայտ է, որ Արմինե Սերոբյանի կողմից իր մասնագիտական պարտականությունների կատարման նկատմամբ դրսևորվել է անբարեխիղճ, անփույթ վերաբերմունք, նա պատշաճ կերպով չի կատարել Հայկ Խաչատրյանին բժշկական օգնություն և սպասարկում իրականացնելու ուղղությամբ իր մասնագիտական պարտականությունները:

Միջնորդում եմ որոշում կայացնել Արմինե Վազգենի Սերոբյանին ՀՀ քրեական օրենսգրքի 130 հոդվածի 2-րդ մասով և 376 հոդվածի 2-րդ մասով որպես մեղադրյալ ներգրավելու մասին:

4. Քրեական գործում առկա նյութերից, մասնավորապես, ՀՀ պաշտպանության նախարարի 06.02.2012թ. թիվ 77 հրամանից[7] հետևում է, որ ՀՀ պաշտպանության նախարարի հանձնարարությամբ իրականացված ծառայողական քննությամբ պարզվել է, որ 2011թ. դեկտեմբերի 6-ին, ժամը 09.00-ից մինչև հաջորդ օրվա ժամը 01.00-ն, այսինքն՝ 16 ժամ անընդմեջ (առանց հանգստանալու) ՀՀ ՊՆ 68617 զորամասի ժամկետային զինծառայող Հայկ Խաչատրյանը շարքայիններ Սուրեն Ոսկանի Սարգսյանի և Անդրանիկ Մանվելի Պապոյանի հետ միասին պարեկային ծառայություն է տարել 5-րդ ԲԿ-ի զինավանի տարածքում կառուցվող նոր ճաշարանի անավարտ շինության շրջակայքում, որի ժամանակ մրսել է և դեմքի շրջանում ցավեր է զգացել:

Նշվածից հետևում է, որ Հայկ Խաչատրյանի դեմքի շրջանում ցավերի պատճառ է դարձել հենց 2011թ. դեկտեմբերի 11-ին պարեկային ծառայության իրականացման կարգի կոպիտ խախտումներով պարեկային ծառայություն կրելը, որի ընթացքում էլ մրսել է, դեմքի շրջանում ցավեր է զգացել, 2011թ. դեկտեմբերի 8-ին ընդունվել է զորամասի բուժկետ, իսկ հաջորդ օրը ուղեգրվել է զինվորական հոսպիտալ:

Միջնորդում եմ Հայկ Խաչատրյանին պարեկային ծառայության կարգի խախտմամբ պարեկային ծառայության նշանակած (այդպիսի հրաման տված) պաշտոնատար անձանց պարզելու նպատակով իրականացնել անհրաժեշտ

---

[5] Տես հատոր 1, գ.թ. 71

[6] Լեյկոցիտների արդյունքը գրանցվել է 12,9 (նորման՝ 3,8-11,2); նեյտրոֆիլների տոկոսը ընդ. լեյկոցիտների՝ 80,9 (նորման՝ 42,1-78,4); նեյտրոֆիլների բացարձակ թիվը՝ 10,4 (նորման՝ 1,7-7,4); էրիտրոցիդներ՝ 6,05 (նորման՝ 4,24-5,72); հեմոգլոբին՝ 17,2 (13,1-16,7):

[7] Տես հատոր 2, գ.թ. 253

քննչական գործողություններ և որոշում կայացնել նրանց նկատմամբ քրեական հետապնդում իրականացնելու մասին (մասնավորապես ՀՀ քրեական օրենսգրքի 375 հոդվածի հատկանիշներով):

Տուժողի իրավահաջորդ

Մ. Խաչատրյանի ներկայացուցիչ՝

Մ. Շուշանյան

23.07.2012թ.